Առաջարկված այս լուծումը մեկ անգամ ևս հաստատում է, որ «սոցիալական կապիտալը» զուտ որպես կապերի շահավետություն ընկալելը հանգեցնում է հակասության: Եթե այն մի երևույթ է, որի առկայությունը հանգեցնում է ազգամիջյան բախումների (երբ այն սահմանում ենք որպես ընդամենը կապերի ցանց, այն ունենում է այդպիսի ունակություն), այդ դեպքում ինչու՞ ենք մենք այն «կապիտալ» և առավել ևս «սոցիալական կապիտալ» անվանում: Եվ երկրորդ. կապիտալի առանձնահատկությունը նրա աճելու և ոչ թե նվազելու կամ «հաղթահարվելու» կարողությունն է, ինչպես առաջարկում է Փաթնեմը: Այդուհանդերձ, գիտնականի կողմից ազգային մակարդակում գոյություն ունեցող սոցիալական կապիտալի հնարավոր ներքին և արտաքին հակասությունների վերհանումը, ինչպես նաև սոցիալական և էթնիկ կապերը նույնացնելը, կարևոր է ազգամիջյան հակամարտությունների բնույթը հասկանալու և նաև միջազգային փոխհարաբերություններում սոցիալական կապիտալի դերը և նշանակությունը բացահայտելու տեսակետից: Ի՞նչ է ազգը՝ դա նույն սոցիոմշակույթով շաղկապված մարդկանց հավաքականություն է: Նրանց միավորում է ընդհանուր հայրենիքը, մայրենի լեզուն, պատմական հիշողությունը, հիմնականում նույն կրոնը, բարոյական նույն արժեհամակարգը և անպայմանորեն նույն խմբին՝ այս դեպքում ազգին, պատկանելու զգացումը: Երբ դրան ավելանում է միասնության շահավետության գիտակցումը, արդեն կարելի է հավասարության նշան դնել ազգի և հասարակության մակրոմակարդակում սոցիալական կապիտալի միջև: Այն ազգերը, որի անդամներն ավելի շատ են ներդնում ընդհանուր բարիքի ստեղծման գործին, ավելի են առաջադիմում և միևնույն ժամանակ ազգն ինքը որպես սոցիալական կապիտալի դրսևորում, նեցուկ է դառնում տվյալ հավաքականության յուրաքանչյուր անդամին: Ուստի ազգային պատկանելությունը դառնում է շահեկան ինչպես յուրաքանչյուր անդամի, այդպես էլ ամբողջ հավաքականության համար: Սոցիալական տարբեր խմբերի միջև շահերի բախում չկա, ինչպես նաև չկա խզում տնտեսական և սոցիալական կապիտալների միջև. դրանք սահուն փոխակերպվում են մեկը մյուսին՝ փոխադարձաբար հարստանալով և միասնաբար նպաստելով քաղաքական, քաղաքացիական ազգի վերարտադրությանը և զարգացմանը: Սոցիալական կապիտալի «հաղթահարման» միջոցով միջէթնիկ անհամաձայնության խնդրի՝ Փաթնեմի կողմից առաջարկված լուծումը համոզիչ չէ և իր հիմքում հակասական է: Այն դեպքում, երբ վերոնշյալ խնդիրը դադարում է գոյություն ունենալուց, երբ մենք «սոցիալական կապիտալը» սահմանելիս նշում ենք, որ ցանկացած համախմբում, այդ թվում ազգային համախմբում, կարող է համարվել սոցիալական կապիտալ միայն այն դեպքում, եթե այն խարսխված է բարոյական արժեհամակարգի վրա և ունի մարդասիրական բովանդակություն: Հետևա-

բար, հասարակական հաստատությունների տարբեր մակարդակների միջև (ընտանիքի և հասարակության, հասարակության և պետական իշխանության և այլն), գործնականում գոյություն ունեցող հակասությունների դրդապատճառը, ինչպես նաև միջէթնիկ և միջազգային հակասությունների և հակամարտությունների պատճառը, պետք է փնտրել ոչ թե ազգերի և մշակույթների տարբերությունների և տարբեր խմբերի սոցիալական կապիտալների միջև գոյություն ունեցող թվացյալ հակասությունների մեջ, այլ հակառակը՝ սոցիալական կապիտալի անբավարար պաշարի կամ բացակայության մեջ: Փաթնեմի «սոցիալական կապիտալի հաղթահարումը» որպես շահերի բախման և միջխմբային հակասությունների լուծման բանալի, թերևս, ունի նույն խոցելի կողմը, որը նկատելի է նաև Պիեր Բուրդյեի տեսության մեջ [6]: Վերջինս սոցիալական կապիտալը սահմանում է որպես միայն ներխմբային երևույթ: Փաթնեմը, ինչպես և Բուրդյեն, չի շեշտադրում երևույթի բարոյական կողմը և, բնականաբար, առնչվում է այնպիսի դեպքերի հետ, որոնք ցանկալի է և անհրաժեշտ է հաղթահարել: Ինչպես յուրաքանչյուր երևույթ, սոցիալական կապիտալը նույնպես ունի ձև և բովանդակություն, որոնք մեկն առանց մյուսի գոյություն չունեն: Սոցիալական կապիտալի պարագային՝ համախմբումը, միավորումը, մարդկային փոխադարձ կապերի ցանցը խնդրո առարկա երևույթի ձևն է՝ կառուցվածքը, իսկ այն, թե որ նպատակի շուրջ են նրանք համախմբվում, ինչպիսին է այդ շահի, կամ նպատակի բնույթը՝ դա արդեն երևույթի բովանդակությունն է: Խնդիրն այն չէ միայն, որ հասարակությունը համախմբված լինի, այլ այն, թե ինչ հարցի շուրջ են համաձայնության գալիս և, թե՝ որ գաղափարախոսությունն է միավորում մարդկանց: Իհարկե, հավաքականությունն ինքնին ուժ է, սակայն դա, դեռևս, ազգի վերարտադրության և զարգացման համար բավարար պայման չէ: Երբ Եղիշե Չարենցը գրում էր. «Ով, հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», նա հանճարեղ խորաթափանցությամբ ձևակերպելով հայության առջև ծառացած և դժբախտությունների պատճառը հանդիսացող ամենից արդիական խնդիրը, գիտեր նաև, որ խնդրի լուծման բանալին՝ համախմբումը, առաջարկում է այն ժողովրդին, որն իր պատմական անցյալով, իր ստեղծագործական ներուժով և բարի կամքի դրսևորումներով ցանկանում է աշխարհի և մարդկության հետ ներդաշնակ ապրել: Դա այն հավաքական ուժն է, որի ինքնության նպատակը ոչ թե մյուս հավաքական ուժերը վերացնելն է, այլ սեփականը զարգացնելը: Հակառակ դեպքում «հավաքական ուժը» կարող է չարիք դառնալ բոլորի համար և առաջին հերթին՝ ինքն իր համար: Նախորդ դարի 30-ական թվականներին Ֆաշիստական գաղափարախոսությամբ «միավորված» գերմանական ազգը հնարավոր չէ սոցիալական կապիտալ համարել կամ՝ մի ընտանիք, որն իր սերտ ազգակցական և այլ կապերով մաֆիայի պարագլուխ է, դարձյալ չի կարող սոցիալական կապիտալի կուտակման օրինակ լինել: Հետևաբար, սոցիալական կապիտալը բնութագրելիս, առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել նրա բովանդակությանը՝ այն գաղափարներին ու նպատակներին, որոնց շուրջ համախմբվում է հասարակությունը իր տարբեր մակարդակներում: Եվ, իհարկե, ինչպես արդեն նշել ենք, սոցիալական կապիտալ գոյանում է այն ժամանակ, երբ միավորման հիմքում ոչ միայն ազգասիրության կամ առավել ևս, ազգակցության զգացմունքներն են, կամ, տարբեր խմբային շահերը, այլև՝ առաջին հերթին, մարդասիրությունը: «Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ կսիրես» գաղափարը ոչ միայն միջանձնային հարաբերություններում հավասարակշռություն և հետևաբար խաղաղություն պահպանելու բանաձևն է, այլև՝ միջազգային հարաբերություններում քաղաքական անլուծելի թվացող խնդիրների լուծման բանալին: Սիրիր քեզ և հավասարապես սիրիր մերձավորիդ և ուրեմն սիրիր քո երկիրը, քո ազգը, սակայն եղիր բարյացկամ և հանդուրժող մյուս ազգերի նկատմամբ: «Սոցիալական կապիտալ» հասկացության մեջ սավծին ավելանում է միայն շահավետության գաղափարը. վարվիր այդպես, որովհետև դա նաև շահավետ է և հեռանկարային, որվհետև դա՝ չարենցյան բնորոշմամբ, քո փրկությունն է: Ազգերի խաղաղ համակեցությանը հասնելու համար սոցիոմշակութային կապերը պետք է ոչ թե թուլացնել, ինչպես

առաջարկում է Փաքնեմը, և, որը մարդկությանը կառաջնորդի դեպի դիմազրկության քաոս, այլ՝ հակառակը պետք է նպաստել մշակութային բազմազանության պահպանմանը՝ որպես մարդկության և քաղաքակրթության վերարտադրության և զարգացման միջոց: Մշակույթը ազգի ստեղծագործական աշխատանքի հավաքական արդյունքն է, նրա ինքնության դրսևորումը և միշտ ունի ազգային նկարագիր: Մշակութային և գիտական նվաճումներով է ձևավորվում քաղաքակրթությունը, որն ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային նշանակություն ունի: Մշակույթները, թեև, իրենց ինքնությունը պահպանում են ինքնատիպության շնորհիվ, միևնույն ժամանակ անջրպետված չեն միմյանցից և սնուցվում ու հարստանում են միմյանցով: Յուրաքանչյուր ազգ, որպես մշակութային և քաղաքական միավոր, գոյություն ունի մյուսի գոյության և նրա հետ համեմատվելու հնարավորության շնորհիվ և, հետևաբար, որպեսզի փոխազդեցությունների և փոխհարստացման այդ գործընթացը շարունակական բնույթ կրի, առաջին հերթին պետք է չսպառել հումքը: Ժամանակակից քաղաքակրթությունը չպետք է ցամաքեցնի այն ակունքը, որից սնվում է և պետք է ոչ թե «բախման», այլ ներդաշնակության մեջ լինի հին քաղաքակրթությունների հետ: Այդպիսի հավաքական բարոյական վարքագիծ ունենալու համար անհրաժեշտ է նաև բարոյականության շահավետության գիտակցում, կամ, եթե ավելի ստույգ լինենք, ապա՝ դրան այլընտրանք չունենալու գիտակցում: Եվ, փոխադարձաբար, այդպիսի գիտակցությամբ հասարակությունը նպաստավոր միջավայր է սոցիալական կապիտալի շարունակական կուտակման համար: Եթե սոցիալական կապիտալը նպաստում է ազգային ինքնության պահպանմանը և կապիտալների մյուս տեսակների գոյացմանն ու զարգացմանը (տնտեսական, մշակութային, մարդկային), ապա միևնույն ժամանակ, ինչպես նշում է ամերիկացի նշանավոր հասարակագետ և փիլիսոփա Թելքոթ Փերսոնսը, սոցիալական կապիտալն ինքը չի կարող զարգանալ առանց հասարակության մեջ մարդկային և մշակութային կապիտալների բավարար պաշարի [7]: Ինչպես մարդկային կապիտալը միայն մարդու կենսաբանական և մտավոր կարողությունները չեն, այլ նաև՝ դրա սոցիալական նշանակությունը, այդպես էլ սոցիալական կապիտալն ավելին է, քան նրա գումարելիների՝ սոցիալականի և կապիտալի ընդհանուր գումարը. դա նրա ազգային և քաղաքակրթական ներունակություններն են: Ազգը ձևավորվում է հարյուրամյակների ընթացքում մարդկանց հոգևոր և մտավոր ունակությունների հավաքական դրսևորման՝ մշակութաստեղծ համատեղ աշխատանքի միջոցով: Ինչպես սոցիոմշակույթի, այդպես էլ քաղաքակրթության ինքնապահպանության և վերարտադրության միջոցը բարոյական արժեհամակարգի պահպանումն է, հանրային շահի կամ հավաքականության շահավետության գիտակցումը: Դրա հակառակը հավաքական ինքնաոչնչացման ուղին է: Պատահական չէ, որ ազգայինի վերարտադրությունը կամ «կենսաբանական նպատակը» [8] XX դարի առաջին կեսի փիլիսոփա և քաղաքական գործիչ Հայկ Ասատրյանը համարում է «օգտապաշտական (ուտիլիտարիստական) նպատակադրության չափորոշիչ. «մեր ճշմարտությունների գործնական արժեքը չափորոշվում է նրանով, թէ ի՞նչքան և ո՞րպէս նրանք ծառայում են մեր կենսաբանական նպատակներին: Արժեքավոր է ամե՛ն ճշմարտություն, որ կենսաբանորեն նպատակայարմար է: Անարժեք և անիմաստ է ամէ՛ն ճշմարտություն, որ կենսաբանորէն նպատակայարմար չէ» [8]:

Ֆուկույաման սոցիալական կապիտալը չի համարում համընդհանուր հասարակական բարիք, ինչպես համարում է Ջեյմս Քոուլմենը [9]: Ֆուկույաման չի բացառում նաև սոցիալական կապիտալի հնարավոր բացասական հետևանքները: Միևնույն ժամանակ, նրա համոզմամբ սոցիալական կապիտալը բարոյական նորմերն են: Այստեղ դարձյալ առնչվում ենք հակասության, քանի որ բարոյական նորմի առանձնահատկությունն այն է, որ այն վերաբերում է հասարակական հաստատությունների բոլոր մակարդակներին: Համընդհանուր ընդունված նորմը չի կարող ընդունելի լինել ընտանիքում և անընդունելի ընտանիքից դուրս: Ազնվությունը և բարությունը բարոյական բացարձակ արժեքներ են: Հնարավոր չէ մարդն ընտրություն կատարի ում հետ ազնիվ լինի և ում հետ՝ ոչ: Ինչպես

նաև հնարավոր չէ բարոյական նորմերը հարմարեցնել իրականությանը: Դա նշանակում է գլխիվայր շրջել մարդկային քաղաքակրթությունը: Եթե սոցիալական կապիտալը ոչ թե համընդհանուր հասարակական բարիք է, այլ միայն ազգային, կամ միայն ընտանեկան, կամ վերաբերում է որևէ առանձին ընկերակցության, ապա այդ երևույթները բնորոշող այլ եզրույթներ կան, ինչպես օրինակ, «ընտանեկան համերաշխություն», որն ինքնին կապիտալ է, կամ «ազգային միաբանություն», որը նույնպես կապիտալ է: Անշուշտ, կարելի է ասել, որ վերոնշյալ երկու դեպքերում մենք գործ ունենք «սոցիալական կապիտալ» երևույթի փոքր մոդելի հետ, սակայն այդ դեպքում, հարց է առաջանում՝ ինչու նոր տեսություն մշակել և նոր եզրույթ շրջանառել, եթե չկա նոր գաղափար և առանձնահատկություն: Սոցիալական կապիտալը բնութագրելիս չկարևորել նրա ազգային և համամարդկային, ինչպես նաև, քաղաքակրթական ներունակությունները, նշանակում է անտեսել նրա հիմնական առաքելությունը՝ այն դարձնելով ընդամենը շահավետ գործիք կարճաժամկետ ծրագրում: Արդյունքով է պետք որոշել դա կապիտա՞լ է, թե՞՝ ներուժ՝ տնտեսական, մարդկային, կամ սոցիալական: «Կապիտալ» հասկացության մեջ կա գնահատական, որը բխում է նրա վերարտադրվելու և զարգանալու կարողությունից և, հետևաբար, դեպի ապագան միտված լինելուց: Յուրաքանչյուր խնդիր ինքնին միշտ բարդ է, քանի դեռ լուծված չէ: Սակայն լուծումը միշտ պարզ է, բարդ լուծումներ չեն լինում: Ակնհայտ է, որ ժամանակակից քաղաքակրթությանը բնորոշ է բարդությունը: Հետևաբար, կարելի է ասել, որ այն խճողվել է չլուծված հիմնախնդիրների մեջ, որոնցից մեկը հին և նոր քաղաքակրթությունների միջև խորացող հակասություններն են: Լուծումների համար սոցիալական կապիտալի ներկա չափաքանակը չի բավարարում և միևնույն ժամանակ, սոցիալական կապիտալի կուտակման համար անհրաժեշտ ներդրումները գնալով նվազում են, որովհետև նոր գաղափարախոսության ընդունումը ազգ-պետությունների և միջազգային հանրության կողմից հետաձգվում է: Բարեկամության երկու եղանակ կա. մեկը խարսխված է սիրո վրա, իսկ մյուսը՝ օտարի հանդեպ թշնամության. բարեկամություն՝ ընդդեմ օտարի: Հանթինգթոնի «Ով ենք մենք» գրքում արծարծված է հետևյալ միտքը, որ, եթե թշնամու կերպարը չլինի, ապա ամերիկյան հանրության միաբանությունը կխարխլվի: Նա գտնում է, որ երկրի ներսում պետք է հսկել խսպանախոս հանրությանը, իսկ երկրից դուրս պետք է արմատական իսլամիզմի դեմ պատերազմ վարել, որպեսզի պահպանել երկրի միասնությունն ու ամերիկյան ազգային ինքնությունը [10]: Հանթինգթոնի առաջարկած «լուծումը» քաղաքակրթությունների բախման ճանապարհն է: Սոցիալական կապիտալի հայեցակարգն առաջարկում է այլ լուծում, որը հնարավորություն է ընձեռում քաղաքակրթությունների հանագոյակցության համար: Համամարդկային ինքնաճանաչողությունը խարսխված է ազգային մշակույթների վրա: Ազգային ինքնաճանաչողության և ուրեմն մարդկության զարգացման և քաղաքակրթությունների վերատադրության համար չկա այլ ճանապարհ՝ բացի մշակութային ինքնությունների պահպանումն ու վերարտադրությունը: Այդ իսկ պատճառով ժամանակակից աշխարհը նոր հայեցակարգով առաջնորդվելու կարիք ունի, որը պետք է հիմնված լինի հասարակական նոր և արդիականացված դաշինքի վրա: Դա անհատի, ընտանիքի, քաղաքացիական ազգի, պետության և համաշխարհային հանրության միջև ներդաշնակ համագոյակցությունն է՝ ընդհանուր շահի գիտակցումով: Հին գործիքներով այլևս հնարավոր չէ նոր ժամանակների խնդիրները լուծել: Նոր լուծումներ են անհրաժեշտ, որոնցից մեկը սոցիալական կապիտալի հայեցակարգի ընդունումն է՝ որպես ժամանակակից քաղաքակրթության պայմաններում նոր ձևավորվող հասարակական լայն դաշինքի գործառույթ: Այսօր Ժամանակի հրամայականն է դարձել ընդունել նոր ազգային և համամարդկային գաղափարախոսություն, որի առանցքում կլինեն ոչ թե թշնամու կերպարի որոնումները և քաղաքակրթությունների բախման անխուսափելիության գիտական կանխատեսումները, այլ ազգերի խաղաղ գոյակցության և մարդկության ներդաշնակ զարգացման հայեցակարգը: Ընդհարումների և բախումների տեսությունը հիմնվում է ազատականության գաղափա-

րախոսության սողանցքներից սկիզբ առած անզիջում մրցակցության գաղափարի վրա: Սոցիալական կապիտալի հայեցակարգի առանցքում միասին ապրելու մշակույթն է, սոցիալական համերաշխության շահավետության գիտակցումը, մշակութային համագործակցությունը: Այդ ամենը հասարակական այն կապիտալն է, որի առկայության պայմաններում ժողովրդավարությունը գործում է անխափան, ազատական տնտեսությունն ունենում է սոցիալական առաքելություն, և բազմամշակութային համաշխարհային հանրությունը ապրում և արարում է խաղաղության պայմաններում: Դա մշակույթների ու քաղաքակրթության վերարտադրության և հետևաբար մարդկության շարունակականությունը ապահովելու, թերևս, միակ ճանապարհն է:

1. *Putnam R.* Making Democracy Work: Civic Traditions in Modern Italy// Princeton University Press, 1993, National Civic Review; Spring 1993, էջ 82:
2. *Հարությունյան Էդ.* «Էթնոմշակութային ապաստարանը» որպես գոյատևման գեղագիտական նախագիծ, ԲԱՆԲԵՐ, առանձնատիպ, 132.4, Եր., 2010, էջ 12:
3. *Фукуяма Ф.* Доверие: социальные добродетели и путь к процветанию. М.: «Изд. АСТ», 2004, էջ 7:
4. *Хантингтон С.* Столкновение цивилизаций. М., 2006, էջ 3:
5. *Putnam R.* Bowling Alone: The Collapse and Revival of American Community, 2000, ISBN.
6. *Бурдьё П.* Формы капитала. Экономическая социология, №3, 2005, էջ 65:
7. *Парсонс Т.* О структуре социального действия. М.: Академический Проект, 2000. С. 262–280:
8. *Ասատրյան Հ.,* Հատընտիր, Եր., Ամարաս, 2004, էջ18:
9. *James S. Coleman* “Social Capital in the Creation of Human Capital”, *The American Journal of Sociology*, Vol. 94, Supplement: Organizations and Institutions (1988), (www.jstor.org):
10. *Хантингтон С.* Кто мы?: Вызовы американской национальной идентичности. М.: «Издательство АСТ», 2004, էջ 406–407: 10.
11. *Blau P.M.* Exchange and power in social life / P. M. Blau. N.-Y.: John Wiley, 1964.
12. *Бауэр О.* Национальный вопрос и социал-демократия // Нации и национализм. М., 2002.
13. *Coleman J.S.* Foundations of social theory: The Bellhop Press of Harvard College, 1994.
14. *Gellner E.* Nations and Nationalism, Second Edition, Blackwell Publishing, 2006.
15. *Гидденс Э.* Устроение общества. М., 2005.
16. *Дюркгейм Э.* О разделении общественного труда // RoyalLib.ru
17. *Манн М.* Нации-государства в Европе и на других континентах // Нации и национализм. М., 2002.
18. *Мертон Р.* Явные и латентные функции. Американская социологическая мысль. М., 1994.
19. *Սողոմոնյան Գ.,* Ճգնաժամային հասարակության ընդհանուր բնութագիրը, հոդվածների ժողովածու, Պրակ III, ԵՊՀ, 2007:
20. *Фукуяма Ф.* Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке. М., 2006.
21. *Fukuyama F.* Social Capital and Civil Society, 1999.
22. *Штомпка П.* Социология социальных изменений. М., 1996.

23. *Տանաջյան Ք.,* Սոցիալական կապիտալը որպես սոցիոմշակութային վքարների հաղթահարման մեխանիզմ, ԲԱՆԲԵՐ, Երևանի համալսարանի, 137.4, 2012:
24. *Woolcock M., Narayan D.* Social Capital: Implications for Development Theory, Research, and Policy//Final version submitted to the *World Bank Research Observer //* Vol. 15(2), 2000.

НАЦИОНАЛЬНЫЕ И ЦИВИЛИЗАЦИОННЫЕ РЕСУРСЫ СОЦИАЛЬНОГО КАПИТАЛА

Резюме

В статье анализируются функциональные особенности социального капитала. Выявлены его национальные и цивилизационные ресурсы. Показана взаимосвязь социального капитала и институциональной среды: социальный капитал выступает фактором формирования последней, а она, в свою очередь, воздействует на социально-экономическое развитие общества на всех его институциональных уровнях (нано-, микро-, макро-, мета-). Социальный капитал это то, что делает общество обществом, начиная с самого первого коллектива в жизни человека – семьи, и заканчивая таким большим коллективом, как нация. Социальный капитал способствует повышению доверия к институтам государства и консолидации нации. Индикатором социального капитала является воспроизводство и развитие нации и человечества.

Ключевые слова: социальный капитал, нравственные нормы, консолидация нации, цивилизация, общественное благо, доверие.

NATIONAL AND CIVILIZATIONAL RESOURCES OF SOCIAL CAPITAL

Summary

This article presents the analysis of functional features of social capital and its national and civilizational potency. It treats social capital as a social system of relations based on the moral values and norms adherence to which benefit to each member of a community and society as a whole. The paper discusses the peculiarities of social capital at different institutional levels of the society (nano-, micro-. macro-, meta-), the mutual relations and connections of social capital with the institutional environment: social capital creates the latter, on the other hand, in its turn, the state affects the socio-economic development of nation- state. Social capital helps to increase the credibility of the state and the consolidation of nation. The indicator for social capital is the reproduction and the development of nations and mankind.

Keywords: social capital, moral norms, national consolidation, civilization, public good, trust.

SOME ASPECTS OF GLOBALIZATION AND EUROPEAN INTEGRATION

H.Y. Torosyan

The paper examines the main theories of globalization and their relation to the expansion of the European Union. Despite the fact, that some scholars do not see the EU enlargement as an example of globalization, rather than regionalization, they agree that the EU should be perceived as a natural arena for competing conceptions of globalization. The author of the article inclined to believe that the processes of European integration, which take place through the European Neighbourhood Policy should be considered in the context of globalization, rather than regionalization.

Keywords: Globalization, Eurointegration, Europeanization, Eastern Partnership (EaP), national state, Neighborhood Policy (ENP).

Globalization is the process that did not appear in a single day, but it is a development, which has its objective reasons. The formation and gradual development and enlargement of the European Union had its own economic and political preconditions. The author of this study claims that, such processes as globalization and European integration/enlargement should be seen in the same context. According to Rosamond, the relationship between globalization and European integration is puzzling (2005, p. 39). Thus, we will try to analyze different scholars' approaches and find the connections between globalization and the ongoing European integration processes.

The process of globalization is one of the important problems of modern world development. It starts with the formation stage of a fundamentally different type of world community and today it has a decisive influence on the course of the world history.

The issue of globalization has been studied by scientists from different angles of knowledge, which allows us to consider the appearance of its processes almost in all parts of our life. Globalization cannot be interpreted as an unilateral proess, referring to only one of the spheres of human society, that is, in principle, is impossible. According to Rosamond (1999) "Globalization is something that poses a challenge and to which there should be fashioned an effective response. The challenge is economic liberalization and the response appears to be further economic liberalization" (p. 664). At the same time, Rantanen, after bringing some other scholars' definitions, in turn, defines globalization in a following way, "Globalization is a process in which worldwide economic, political, cultural and social relations have become increasingly mediated across time and space" (2004, p. 8).

As Sparks (2007) and Chan (2005) say, today everyone talks about globalization and it has become a hot topic in discourse and it is on the tongues of politicians, media professionals, businesspersons and academics. According to them globalization is cited in business pages in the context of the flows of investment and employment around the world and phrases such as 'global vision', 'global brands', and 'global networks' 'have acquired common currency'. As Sparks points out, for students some courses became very popular just because of the presence of a word 'globalization' in the titles. "Common sense has it that it is the defining characteristic of contemporary society" (Sparks, 2007, p. 133).

Today there are plentiful globalization theories that are competing with each other but at the same time there is no unified theory of globalization that would satisfy all the requirements. As Held and his collaborators put in: 'no single coherent theory of globalization exists although there are a variety of accounts which seek to identify its underlying casual dynamics' (Held et al., 1999).

Fairclough sees as the actual, real processes of globalization - what is actually happening. Moreover, he is opposing it to what is represented as happening, which "are highly complex, diverse, uneven and multidimensional (economic, political, social, cultural, ecological and so forth)" (2006, p. 28). Fairclough continues with the very interesting statement, which says that there are different groups of people which are trying to influence and control these real processes of globalization and when their strategies are successful these people can inflect and partly redirect the trajectory of actual globalization. Also, Fairclough is paying attention to the discourses of globalization associated with strategies for globalization, mostly to the globalist discourse of globalization, which he describes as a discourse which represents globalization in reductive neoliberal economic terms within a strategy to inflect and re-direct actual processes of globalization in that direction. In addition, Fairclough brings six core claims of 'globalism' by Steger (2005, cited in Fairclough, 2006, p. 40):

- Globalization is about the liberalization and global integration of markets
- Globalization is inevitable and irreversible
- Nobody is in charge of globalization
- Globalization benefits everyone
- Globalization furthers the spread of democracy in the world
- Globalization requires war on terror

Fairclough is paying particular attention to the first claim, by calling it the most crucial and central. But in his conclusion Fairclough is arguing with the claim that 'globalization' benefits everyone, as despite the fact that globalization has brought new opportunities and gains for some people, it has made the lives of many others more difficult (2006, p. 162).

According to the popular American journalist Thomas L. Friedmanstates, globalization is "the inexorable integration of markets, nation-states, and technologies to a degree never witnessed before-in a way that is enabling individuals, corporations and nation-states to reach around the world farther, faster, deeper and cheaper than ever before" (1999, p. 7).

Even though, Gerard Delanty mentions that there is relatively little theoretical literature which would explore wider significance of the Eastern enlargement (2006, p. 125), according to Rosamond (2005), there have been registered different claims among European-level policy actors about the relationship between globalization and the EU. For example, Europe is challenged by globalization or the 'European social model' is threatened by globalization, the EU has a responsibility to help 'set globalization within a moral frameworks' etc. Unfortunately, I was not able to find much literature about the Eastern enlargement of the EU in recent years. However, the processes of the EU enlargement that were taking place a decade ago, from my point of view, are still relevant today, as all the countries that would express a will to become a part of the European family will have to go through the same procedures as those countries of Eastern Europe that are now members of that supranational organization.

One cannot help but agree that Europe is the most global place in the contemporary world. The existence of such organizations as EU or NATO brings together different countries with different historical backgrounds and even different geographical locations (for instance, US and Canada are members of NATO, but are located in North America etc.).

Since 1957 when EU was founded in, the quantity of the member states has grown from 6 to 27. The crucial for the EU enlargement was the year of 2004, when Czech Republic, Cyprus, Estonia, Latvia, Lithuania, Hungary, Malta, Poland, Slovenia and Slovakia joined the European Union which from a club of 'rich' Western European states was transformed into a supranational political organism (Krzyzanowski, 2010, p. 135). For all new member states there are several political and economic criteria written just in three pages long document, adopted in June 1993 by European Council in Copenhagen, which Ralf Dahrendorf calls 'one of the most important resolutions ever adopted by the EU' (2006, p. 191).

Ben Rosamond (2005, p. 24) says that the EU may be read in two ways:

- The first sees the EU as a collective response to the onset of a range of transnational economic challenges.
- The second considers the EU as an example of globalization as it treats the EU as an agent for the unravelling of (Westphalian) European space.

Rosamond points out that the second approach amounts to treating the EU as an instance of globalization. The EU – whether conceived as a form of liberal market order or as a hybrid form of multi-level polity – is a realization of globalization.

Talking about globalization and the EU, Rosamond (2005, pp. 26–27) offers a table (see Table 1) which shows possible relationship between globalization and the EU. He compares internal and external roles ascribed to the EU and positive, ambivalent and negative views of globalization. However, Rosamond calls it "a very simple attempt to plot putative roles for the EU that follow logically from three stylized normative views of globalization".

Table 1. Possible relationship between globalization and the EU

Normative view of globalization	Role ascribed to the EU	
	Internal	**External**
1. Positive	Promotion of deregulation and liberalization European states	Promotion of liberalized world order in line with the precepts of global institutions
2. Ambivalent	Filtering of the benefits of liberalization, while preserving the distinctive qualities of European capitalism	Promotion of humanized version of globalization and/or the social dimension of globalization
3. Negative	Resistance to Americanizing/liberalizing processes. Preservation of the virtues of the European model of society	Promotion of an alternative model of world order

Source: Rosamond (forthcoming, ch. 1, table 1.1).

However, Rosamond (2005, p. 31) analyzing the 'abandonment of the Concept of Globalization' comes to the conclusion that the EU neither economically nor in institutional form is a case of globalization, rather it is an example of regionalization.

Another researcher of globalization and European integration Stylianos Papathanassopoulos (2005) states that Europe continues to offer the best place for examining global processes. He mentions that comprehensive political and social changes took place in continent after the collapse of Soviet Union, which brought to an extension of "the boundaries of the 'Europeanization of media'. One way or another, the European Union (EU) has attempted since the mid-1980s to initiate a policy aiming to 'Europeanize' the whole communication sector of its member states, if not the European continent" (p. 47). At the same time Ben Rosamond agrees with Papathanassopoulos by saying that "the EU should be understood as a natural arena for competing conceptions of globalization" (2005, p. 26). Moreover, "regionalism is a truly global phenomenon. Different parts of the globe are looking for different ways to accommodate themselves within the globalized world order, and regional arrangements are one important way of doing so. There is thus no paradox, and even less a contradiction, between regionalism and globalization. Instead, regionalism is one aspect of the process of globalization, and developments in one region inform and indeed feed into developments in others (Best & Christiansen, 2011, p. 441).

Let us for a moment agree that the EU is a case of regionalization. This is acceptable in the case that all member states are located at the same continent and have common borders. But nowadays several processes are developing in the European neighborhood that can potentially bring to the new enlargement of the European Union. European Union is actively promoting and implementing the European Neighbourhood Policy, which was developed in 2004 and was divided into two individual EU policies – Union for the Mediterranean, and the Eastern Partnership in 2008–2009. The Union for the Mediterranean includes 16 Mediterranean partner countries from North Africa, the Middle East and the Balkans, while the Eastern Partnership includes six former Soviet republics such as Armenia, Azerbaijan, Georgia, Belarus, Ukraine and Moldova. Most of these countries are not located at the European conti-

nent; however, for some of them, there is a hypothetical opportunity to become the member of the European Union in the future.

At the same time EU is developing European Union and Central Asia Strategy for a New Partnership which was adopted in June 2007. Unlike previous two policies, countries that are involved in this Partnership even don't have sea borders with the EU. Thus, European Union ties to secure its neighborhood, even though it is hard to call Central Asian countries EU neighbors. However, as it is stated in the European Union and Central Asia Strategy for a New Partnership booklet, "with EU enlargement, the inclusion of the Southern Caucasus into the European Neighbourhood Policy and the Black Sea Synergy Initiative, Central Asia and the EU are moving closer together" (General Secretariat, 2007, p. 9). Moreover, though, three EaP countries – Armenia, Azerbaijan and Georgia are politically engaged with the European Union and chose the way of Eurointegration, those countries are located in the region of South Caucasus and are divided by the Black Sea from the European Union. However, the EaP does not offer a membership for those countries, it does not exclude that either.

Thus, based on aforementioned we can conclude that the process of Eurointegration is moving beyond the European continent, which, from my point of view, cannot be explained other than a globalization process. Moreover, regionalization processes cannot be separated from globalization, as regionalization is one of the most important components of the process of globalization. As Best and Christiansen mention, "there is no contradiction between globalization and regionalism – by contrast, regional arrangements are one way in which states in different parts of the world respond to the challenges of globalization" (2011, p. 429). Thus, the author of this study strongly believes that the ongoing process of Europeanization and Eurointegration of the six former Soviet countries, which are involved in Eastern Partnership program, must be seen as an integral part of the bigger process of world's globalization. Moreover, states belonging to the European Union are no longer the only centers of power within their own borders. Political processes taking place in the EU can be characterized as a 'supranational'.

Globalization and the process of the EU enlargement bring to the erosion of the nation-state. Thus, talking about reduction of power of contemporary state, Held and McGrew (2007) mention "Political space for the development and pursuit of effective government and the accountability of power is no longer coterminous with a delimited political territory. Contemporary global change is associated with a transformation of state power as the roles and functions of states are rearticulated, reconstituted and re-embedded at the intersection of regionalizing and globalizing networks and systems" (p. 221).

In this case Bartelson (2000) states that "when it comes to the modern state and its future, […] it will be more or less radically transformed, and its capacity for action is severely circumscribed by global structures and processes" (p. 188). And to Sassen (1997 cited in Bartelson, 2000, p. 188), "while sovereignty and territory 'remain key features of the international system', they have 'been reconstituted and partly displaced onto other institutionasl arenas outside the state and outside the framework of nationalized territory'."

According to Sparks(2007, p. 147), the development of such supranational political forms, as for instance United Nations, WTO, European Union, NGOs etc., is undermined the collapse of state system that dominated world affairs for the last four centuries. In this case, Sparks states that "Transnational political organizations like the UN and the EU have eroded its power to act independently. Multinational corporations are so large and powerful, and the capital they command so mobile, that the state can no longer subordinate them to its regulatory regime" (2007, pp. 136–137).

According to David Machin and Theo van Leuween, today, "we live in a period of transition. Two worlds coexist uneasily: the world of nation states, with their nationnal languages and cultures, and the global world with the emerging global language and culture carried, not by nation states, but by global corporations and international organizations" (2007, p. 2). From my point of view nation states do not exist separately from the second 'global world', that Machin and van Leuween offered. Nation states are the part of that global world and today they are challenged by global processes, NGOs, etc. In today's world it's becoming extremely hard to keep the national language and culture 'safe' from the external influence. Small countries, for instance Armenia, where dominates traditional way of thinking, are more sensitive to everything new that can affect something which is just their – culture, language etc. However, no single nation can exist in isolation, without the cultural contacts and mutual enrichment of different cultures. Anna Roosvall states that we must consider the role of the nation when we are dealing with globalization and explore for instance how traditional ways of thinking are challenged and how these challenges are met (2010, p. 220). This point of view suits best for the six EaP countries mostly for South Caucasus republics, where traditional way of thinking can be met almost everywhere – everyday relations between people, business, politics, etc.

Anna Roosvall and InkaSalovaara-Moring say, "Globalising processes do offer an alternative to the primacy of the nation, but have so far been unable to overcome its dominance" (2010, p. 9).

Hay and Rosamond (2002) think that "the discourse of globalization as cultural threat tends to be associated with a pervasive cynicism and skepticism about all transnational political and economic initiatives (whether regional or genuinely global) which "tends to promote the process of European integration as a bulwark against the undesirable consequences of globalization" (p. 14). Hay and Rosamond continue their thoughts with citing Vivien Schmidt: "in place of an overall legitimating discourse of the left or the right, successive governments continued to use the rhetoric about the need to rise to the challenge of Europeanisation as a guard against the threat of globalization to justify continued industrial reform" (2000 cited in Hay & Rosamond, 2002, p. 14).

Rosamond (1999) continues that different conversions of the EU's external policy aim to illuminate 'Europe' as a significant competitive political formation which should gain support and meet the expectations of other weighty political actors. "The idea is a social construction increasingly reliant on ideas about a globalized/globalizing external context, used to draw actors into the European arena" (p. 662).

Thus, after analyzing aforementioned, we can come to the next conclusion: globalization is an ongoing process that brings to the erosion of the nation-state. At the

same time there are different opinions about the connections between European Union, Eurointegration and globalization, some scholars see the EU as a regionalization and a response to globalization, some – as an example and result of globalization. However, they agree that the EU should be understood as a natural arena for competing conceptions of globalization. The author of the study came to conclusion, that nowadays processes of Europeanization cannot be attributed to regionalization. As contemporary Eurointegration processes, such as Eastern Partnership, Union for Mediterranean etc., go beyond European continent.

1. *Bartelson J.* (2000). Three Concepts of Globalization. *International Sociology.* PP.180–196.
2. *Best E., & Christiansen T.* (2011). Regionalism in international affairs. In J. Baylis, S. Smith, & P. Owens, *The globalization of world politics. An introduction to international relations* (pp. 428–444). New York: Oxford University Press.
3. *Chan J.M.* (2005). Global media and the dialectics of the global. *Global Media and Communication.* PP. 24–28.
4. *Dahrendorf R.* (2006). Unified or open? The European Alternative. In R. Rogowski, & C. Turner, *The Shape of the New Europe* (pp. 185–199). Cambridge: Cambridge University Press.
5. *Delanty G.* (2006). Europe Becoming: The Civilisational Consenquences of Enlargement. In R. Rogowski, & C. Turner, *The Shape of the New Europe* (pp. 125–146). Cambridge: Cambridge University Press.
6. *Fairclough N.* (2006). *Language and Globalization* . New York: Routledge.
7. *Friedman T.L.* (1999). *The Lexus and the Olive Tree.* New York: Farrar Straus Giroux.
8. General Secretariat, C. o. (2007, October). *The EU and Central Asia: Strategy for a New Partnership.* Retrieved February 20, 2013, from Council of the Europen Union: http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/librairie/PDF/EU_CtrlAsia_EN-RU.pdf
9. *Hay C., & Rosamond B.* (2002). Globalization, European integration and the discursive construction of economic imperatives. *Journal of European Public Policy.* PP. 147–167.
10. Held et al. (1999). Global Transformations: Politics, Economics and Culture. Cambridge: Polity.
11. *Held D., & McGrew A.G.* (2007). Globalization/antiglobalization: beyond the great divide. Cambridge: Polity Press.
12. *Krzyzanowski M.* (2010). The Discursive Construction of European Identities: A Multi-Level Approach to Discourse and Identity in the Transforming European Union. Frankfurt am Main: Peter Lang.
13. *Machin D., & Leuween T. v.* (2007). Global media discourse: a critical introduction. Abington: Routledge.
14. *Papathanassopoulos S.* (2005). Europe: an exemplary landscape for comprehending globalization. *Global Media and Communication*. PP. 46–50.
15. *Rantanen T.* (2004). *Media and Globalization.* London: Sage publications Inc.
16. *Roosval A., & Salovaara-Moring I.* (2010). *Communicating the Nation. National Topographies of Global Media Landscapes.* Gothenburg: Nordicom.

17. *Roosvall A.* (2010). Image-Nation. The National, the Cultural and the Global in Foreign News Slide-shows. In A. R. Salovaara-Moring, *Communicating the Nation. National Topographies of Global Media Landscapes* (pp. 215–237). Gothenburg: Nordicom.
18. *Rosamond B.* (1999). Discourses of globalization and the social construction of European identities. *Journal of European Public Policy.* PP. 652–668.
19. *Rosamond B.* (2005). Globalization, the ambivalence of European integration and the possibilities for a post-disciplinary EU studies. *Innovation: The European Journal of Social Science Research*. PP. 23–43.
20. *Sparks C.* (2007). *Development Globalization and the Mass Media.* Los Angeles, New Delhi, London, Singapore: SAGE Publications.
21. *Sparks C.* (2007). What's wrong with globalization? *Global Media and Communication*. PP. 133–155.

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ГЛОБАЛИЗАЦИИ И ЕВРОПЕЙСКОЙ ИНТЕГРАЦИИ

Резюме

В статье исследуются основные теории глобализации и их связь с расширением Европейского Союза. Несмотря на то, что некоторые ученые рассматривают расширение ЕС не как пример глобализации, а скорее регионализации, они сходятся во мнении, что ЕС должен быть воспринят в качестве естественной арены для конкурирующих концепций глобализации. Автор работы склоняется к мнению, что те процессы евроинтеграции, которые происходят посредством «Европейской политики добрососедства», должны быть рассмотрены именно в контексте глобализации, а не регионализации.

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Ամփոփում

Սույն հոդվածում ուսումնասիրվում են գլոբալացման հիմնական տեսությունները և նրանց առնչությունը Եվրոպական միության ընդլայնման հետ: Չնայած այն հանգամանքին, որ որոշ գիտնականներ տեսնում են ընդլայնումը ոչ թե որպես գլոբալացման օրինակ, այլ որպես ռեգիոնալիզացիա, նրանք գալիս են այն եզրահանգման, որ ԵՄ-ը պետք է ընկալվի որպես բնական դաշտ՝ գլոբալացման մրցակից հայեցակարգերի համար: Հեղինակը հակված է հավատալ, որ եվրոպական ինտեգրման այն գործընթացները, որոնք տեղի են ունենում Եվրոպական Հարևանության Քաղաքականության միջոցով, պետք է դիտարկել ոչ թե ռեգիոնալիզացիայի, այլ հենց գլոբալացման համատեքստում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ PR-ի ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ն. Աղայան

Անցումային փուլում համակարգային արմատական փոփոխությունները պետք է համապատասխանեն այս կամ այն հասարակության, ժողովրդի, ազգի, երկրի առանձնահատկություններին, արժեքներին,կոնկրետ պատմական պայմաններին, զարգացման աստիճանին, ազգային շահերին և այլն: Միայն այդ դեպքում է հնարավոր ակնկալել իրական արդյունք, խուսափել արհեստական ճգնաժամերից, ապահովել հասարակության կայուն զարգացում և իրականացնել տվյալ պատմական ժամանակահատվածին համապատասխանող գաղափարախոսություն: Այս դեպքում գաղափարախոսությունը հանդես է գալիս որպես իշխող համակարգի քաղաքականությունն իրականացնելու երաշխիք: Իսկ այն իրականացնելու համար անհրաժեշտ է պահպանել կապը հասարակության հետ և մեծացնել վերջիններիս տեղեկացվածության մակարդակը:

Հիմնաբառեր՝ քաղաքական PR, զանգվածներ, հասարակական կարծիք:

Հասարակական կարծիքի կարևորության մասին կարելի է բավական ապացույցներ գտնել հռոմեացի և հույն մտածողների մոտ, որոնք իրենց աշխատություններում նշում են, որ հասարակական կարծիք ձևավորելու համար բավական մեծ աշխատանք էր կատարվում: Ժամանակի ընթացքում հասարակության հետ աշխատանքը ձեռք է բերում որակական նոր մակարդակ և, առանձնանալով, այն դառնում է ինքնուրույն մասնագիտական գործունեության ոլորտ: «Կապ հասարակության հետ» հասկացությունն առաջացել է 1903թ. ԱՄՆ-ում և կոչվում է «Public Relation» /PR/ կամ «կապ հասարակության հետ»: Այն այսօր, արդեն որպես գիտության ինքնուրույն բնագավառ, գործնականում թափանցել է հասարակական կյանքի կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներ: Այդ իսկ պատճառով աշխարհի բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունները, անդրազգային ընկերությունները մեծ ուշադրություն են դարձնում հասարակության արժեհամակարգի դինամիկ զարգացմանը [1]:

«Աշխատանք հասարակության հետ» հասկացության մեջ արտացոլվում են իմացականի և գործնականի ներհատուկ գործունեության մակարդակները: Հաղորդակցական գործընթացները կարևոր դեր են խաղում ոչ միայն սեփական արտադրական գործունեության, այլ նաև կերպարի ձևավորման, տարբեր սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային խնդիրների վերլուծության համար:

Բազմաթիվ մտավորականներ հասարակության հետ աշխատանք ասելով ենթադրում են կառավարման գործընթաց՝ ուղղված իշխանությունների կամ մասնավոր համակարգերի և հասարակության հետ փոխշահավետ հարաբերություններ հաստատելուն և պահպանելուն, ինչից էլ շատ դեպքերում կախված է լինում հենց այդ համակարգերի հաջող գործունեությունը: Հասարակության հետ կապը դիտարկվում է որպես հասարա-

կության կարծիքի վրա ազդելու հնարավորություն՝ ի շահ հասարակական-քաղաքական կազմակերպությունների: Ոմանք հակված են այդ գործողությունները վերագրել գովազդին: Չնայած այն հանգամանքի, որ հասարակության հետ կապը և գովազդը ունեն լայն լսարանների վրա ազդելու ընդհանուր գործառույթներ, սակայն նրանցից ցանկացածն ունի իր ստույգ նպատակներն ու խնդիրները: Գովազդի հիմնական նպատակն է վաճառել կոնկրետ ապրանք կամ ծառայություն: Իսկ հասարակության հետ կապի հիմնական նպատակն է ստեղծել և պահպանել ձեռնարկությունների, կուսակցությունների, քաղաքական առաջնորդի կերպարը (իմիջը)՝ գիտության և կառավարման արվեստի միասնության միջոցով, ինչպես ներկորպորատիվ կապերում և հարաբերություններում, այնպես էլ տվյալ սուբյեկտի հաղորդակցման հետաքրքրության շրջանակներում գտնվող արտաքին կապերում:

Հասարակության հետ կապի հաստատման և պահպանման համար բավական մեծ ծավալի աշխատանք է իրականացվում հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող արտաքին կապերի և կազմակերպության սոցիալ-քաղաքական միջավայրի ուսումնասիրության նպատակով: Հաղորդակցության նախագծի իրագործման ընթացքում այն իրականացնողն օգտագործում է իր գիտելիքները, հմտությունները և կարողությունները լսարանին (հասցեատիրոջը) համոզելու նպատակով և վերջինիս մոտ ստեղծում է բարենպաստ տպավորություն կոնկրետ կազմակերպության մասին:

Հասարակության հետ կապի հաղորդակցական միջավայրը չի սահմանափակվում միայն PR-ի նեղ ավանդական հասկացության սահմաններով: Այն ենթադրում է հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում կառավարման համակարգերի ակտիվ համագործակցություն՝ կապված մարդկանց, ամբողջ հասարակության համար առաջնային սոցիալական արժեքների հետ, որոնք որոշում են վերջինիս հոգևոր-մշակութային, քաղաքական զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացը: Տվյալ հաղորդակցական միջավայրի շրջանակներում ոչ միայն կազմավորվում են փոխշահավետ կապեր, այլ նաև հասարակական ներդաշնակ հարաբերություններ, որոնց վերջնական նպատակն է հասարակության սոցիալական ինտեգրումը (համարկումը) և հասարակության շահերին համապատասխան սոցիալական փոփոխությունները [1]:

Հասարակության հետ կապի գլխավոր նպատակներից մեկը հասարակական-քաղաքական կազմակերպությունների դրական կերպարի ձևավորումն է: Այն իրականացվում է տարբեր նպատակային խմբերի՝ֆինանսական և բիզնես միջավայրի ներկայացուցիչների, իշխանական տարբեր մարմինների, քաղաքական կուսակցությունների և քաղաքական գործիչների, հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների, արտադրանքներ (կամ ծառայություններ) սպառողների, տարածաշրջանի բնակչության հետ հասարակական կապեր հաստատելու միջոցով:

Հասարակության հետ կապն իր գործունեության ոլորտում ընդգրկում է նաև երկու ավանդական ուղղություններ՝ management՝ կառավարում և marketing՝ առևտուր, վաճառք, իրացում, այսինքն՝ այն ամենը, ինչ վերաբերում է առևտրին:

Մենեջմենթը լայն իմաստով անհրաժեշտ է դիտարկել որպես հասարակության հետ կապի հաստատման և կազմակերպման կառավարում, որը պետք է ապահովի գործնական հարաբերությունների և ստեղծագործական կապերի հաստատման և պահպանման արդյունավետությունը: Սա, ամենից առաջ, ենթադրում է կազմակերպության ստորակարգային (հիերարխիկ) համակարգում փակ կամ ներքին լսարանի և տարաբնույթ գործնական կապերի կազմակերպում և հաստատում բաց կամ «արտաքին» լսարանի հետ՝ ընդգրկելով սպառողների, պետական համակարգերի, մասնագիտացված միավորումների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, տարբեր համայնքների անդամների և իհարկե ԶԼՄ-ների, այսինքն՝ այն ամենը, ինչ վերաբերում է սոցիալական-քաղաքական կյանքին:

Մարքեթինգը հասարակության հետ կապի համակարգում,կազմակերպության նկատառումներից ելնելով, իրենից ներկայացնում է ձեռնարկության կամ վերջինիս ստորաբաժանումների գործունեություն, որն ուղղված է ապրանքների, ծառայությունների, գաղափարների, արժեքների արդյունավետ տարածմանը, դրանք հասարակական լայն զանգվածների հասանելի դարձնելը՝ նախապես ուսումնասիրելով այդ նույն գաղափարները, ծառայություններն ու ապրանքները սպառողների առանձնահատկությունները՝ օգտագործելով վերջիններիս վրա ազդելու համապատասխան մեթոդներ:

Այսպիսով՝ տվյալ համատեքստում հասարակության հետ կապի գործառույթերն իրականացնող սոցիալական մենեջմենթը և մարքեթինգը վերածվում են PR-ի կարևոր գործիքների:

Հասարակության հետ կապի տարաբնույթ գործառույթների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հաղորդակցությունը (այդ թվում՝ նաև սոցիալական մենեջմենթի և մարքեթինգի հաղորդակցությունը): Այն կարևոր դեր է խաղում նաև կորպորատիվ միջավայր ձևավորելու գործընթացում, որի տարրերն են սոցիալական կապերը և հարաբերությունները:

Բազմաթիվ մտածողներ փորձում են միմյանցից տարանջատել գովազդը և PR-ը, իսկ ոմանք PR-ը նմանեցնում են գովազդային գործունեության հետ: Իհարկե՝ ինչպեսPR-ը, այնպես էլ գովազդն ունեն ընդհանուր և հատուկ առանձնահատկություններ: Գովազդը կապված է կոնկրետ ապրանքի, ծառայության, գաղափարախոսության և համապատասխան շրջանակներում դրանց տարածման հետ՝ հանդիսանալով սպառման խթան սպառողի համար: Իսկ հասարակության հետ կապի համակարգը ոչ բոլոր դեպքում է անմիջական արդյունքներ տալիս, քանի որ վերջին սպատրաստում է ապագայի շուկա կամ ապագա գաղափարական գործողություններ: Հասարակության հետ կապի հայտնի մասնագետ Ֆիլիպ Բուարին, ընդգծելով նրանց տարբերությունները, նշում է, որPR-ը «վստահության ռազմավարությունն է», իսկ գովազդը՝ «ցանկության ռազմավարությունը» [2]:

Ինչպես հասարակության հետ կապը, այնպես էլ գովազդը հանդիսանում են մարքեթինգային հաղորդակցության տեխնոլոգիաներ: Մինչ մարքեթինգային հասկացողության առաջացումը, բոլորը կենտրոնանում էին մի հասկացողության՝ «գովազդի» վրա: Իսկ հետո սկսեց զարգանալ մարքեթինգի տեսությունը, առանձնացվեցին նրա ընկալման արմատական հասկացողությունները, ինչպիսիք են՝ advertising՝ «անմիջական գովազդը», sales promotion՝ «իրացման խթանումը», public relation՝ «աշխատանք հասարակության» հետ, direct marketing՝ «անմիջական մարքեթինգը» և այլն:

Այս հիմնարար հասկացությունների ամբողջությունն էլ ընդունված է վերագրել «promotion» (մարքեթինգային հաղորդակցության միջավայրում ապրանքների և ծառայությունների առաջխաղացման համակարգ) հասկացությանը: Հաճախորդի տեսակետից գովազդն ու հասարակության հետ կապը համընկնում են, քանի որ գովազդի և PR-ի վերջնական նպատակն ապրանքի, գաղափարների, ծրագրերի առաջխաղացումն է: Գովազդը և հասարակության հետ կապը նմանվում են միայն լայն լսարանի վրա իրենց ազդեցության գործառույթով: Տարբերությունն այն է, որ հասարակության հետ կապի հիմնական գործառույթը կառավարումն է, որում առաջնայնությունը տրվում է միջանձնային հաղորդակցությանը: Հասարակության հետ կապի հիմնական նպատակը հասարակության հետ ներդաշնակ հարաբերությունների պահպանումն է և կազմակերպության դրական կերպարի ձևավորումը, իսկ գովազդը վճարովի հիմունքներով կազմակերպում է միջոցառումների համակարգ, որոնք նպաստում են ապրանքի, ծառայության վաճառքին:

Այսպես թե այնպես, ցանկացած ընկերության, հասարակական-քաղաքական կազմակերպության գործունեության համար PR-ը և գովազդը ընդունելի են և կազմում են հասարակության հետ կապի միասնական համակարգ: Ցանկացած տիպի կազմակեր-

պության հաջող գործունեության և զարգացման համար անհրաժեշտ է, որպեսզի առաջանա ընկերության ապրանքների և ծառայության գնման ցանկություն (գովազդ) և ընկերության նկատմամբ վստահություն (PR): Կախված ընկերության առջև դրված նպատակային թիրախից՝ առաջանում է, առաջին հերթին, PR և գովազդային տեխնոլոգիաների կիրառման ընտրության հարց: Ամեն դեպքում, գործնականում մեկը մյուսին լրացնելով՝ինտեգրվում են գլխավոր նպատակին հասնելու համար:

Այսօր արդեն գոյություն ունի մոտ հազար սահմանում, որոնք տարբեր տեսանկյուններից բնութագրում են հասարակության հետ կապը: PR-ի միջազգային միավորման (IPRA) գլխավոր քարտուղար Սեմ Բլեկը PR-ի մասին տալիս է հետևյալ հայտնի սահմանումը. «PR-ը փոխըմբռման միջոցով ներդաշնակության հասնելու արվեստ է և գիտություն: Նույն կազմակերպության մեկ այլ ներկայացուցիչ՝ Ռեկս Խառլոուն (Սան-Ֆրանցիսկո ԱՄՆ), ուսումնասիրելով և ընդհանրացնելով PR-ի մոտ 500 տարբեր սահմանումներ, դրանց հիման վրա դուրս բերեց գիտության այս առանձնահատուկ բնագավառի և մասնագիտական ոլորտի գործունեության հետևյալ սահմանումը. «PR-ը կառավարման ձև է, որը կազմակերպության և կոնկրետ հասարակության միջև նպաստում է շփման, փոխըմբռման, համագործակցության հաստատմանն ու պահպանմանը»: PR-ը ներառում է տարբեր խնդիրների լուծումներ՝ PR-ի միջոցով կազմակերպության ղեկավարներին տրամադրվում են տեղեկություններ հասարակական կարծիքի, կոնկրետ կազմակերպությունների վերաբերյալ հասարակության մեջ իշխող տրամադրությունների վերաբերյալ, դրանց հիման վրա մշակվում են համապատասխան միջոցառումներ: PR-ը կառավարման հատուկ ձև է, որի նպատակն է հաստատել և պահպանել փոխկապվածություն, փոխըմբռնում, համագործակցություն կազմակերպության և հասարակական կոնկրետ շերտերի, ամբողջ հասարակության միջև, կառավարել խնդիրների կամ վիճահարույց հարցերի շուրջ տարվող որոշումների գործընթացը, օգնել կազմակերպությունների ղեկավարներին և առաջնորդներին ուսումնասիրելու հասարակական կարծիքը և արձագանքել նրան, օգնել վերջիններիս արդյունավետ փոխվելու ժամանակի պահանջներին համապատասխան, ճիշտ ժամանակին զգուշացման համակարգեր ներդնելու առաջարկներ անել, որը կօգնի կանխատեսել զարգացման միտումները, որպես հիմնական միջոցներ օգտագործել գիտական մեթոդները, որոնք խարսխված են շփման էթիկայի նորմերի վրա» [3]:

PR-ի առավել հաճախ շրջանառվող սահմանումներից մեկը, որը հիմնականում ուշադրությունը կենտրոնացնում է PR-ի գործառույթների վրա, ընդունվել է Ամերիկայի հասարակական հարաբերությունների միավորման հայտարարությունում (PRSA) 06.11.1982թ.: Համաձայն այդ հայտարարության՝PR-ը նպաստում է առանձին խմբերի և կազմակերպությունների միջև փոխըմբռման հաստատմանը, բարդ, բազմակարծիք հասարակությանը օգնում է որոշումներ ընդունել և արդյունավետ գործել: PR-ը ծառայում է բազմաթիվ սոցիալական-քաղաքական ինստիտուտներին, հասարակական-քաղաքական ձեռնարկություններին, պետական հաստատություններին, հիմնադրամներին, կրթական և կրոնական կազմակերպություններին: Իրենց նպատակներին հասնելու համար այդ ինստիտուտները պետք է ամուր կապեր ստեղծեն տարբեր լսարանների և սոցիալական խմբերի հետ: Սեփական նպատակներին հասնելու համար տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների, հասարակական-քաղաքական շարժումների ղեկավարներից, առաջնորդներից պահանջվում է հասկանալ հարաբերությունների և մարդկային արժեքների բնույթը, որոնց հետ նրանք շփվում են: Իսկ նպատակները պայմանավորված են արտաքին միջավայրից: PR-ի մասնագետները շատ դեպքերում ներկայանում են որպես ղեկավարի խորհրդատու, որպես միջնորդ, օգնում են ներկայացնել նրա անձնական նպատակները և մտադրություններն ավելի հասկանալի, հասարակության համար ընդունելի լեզվով» [4]:

Այլ կերպ ասած՝ հասարակության հետ կապը, նպաստելով առանձին խմբերի և կազմակերպությունների միջև փոխըմբռման հաստատմանը, օգնում են հասարակությանը ընդունել որոշումներ և գործել ավելի արդյունավետ:

Այժմ նշենք PR-ի մասին առկա տեսությունների և սահմանումների մեջ առավել կարևորները, բնութագրում ենPR-ը տարբեր դիտանկյուններից:

- «PR-ը փոխըմբռման միջոցով ներդաշնակության հասնելու արվեստ է և գիտություն, որը հիմնված է ճշմարտության և ամբողջական տեղեկացվածության վրա» [4]:
- PR-ը շարունակական գործողություն է, որն ուղղված է կազմակերպության և հասարակության հետ փոխըբռման և բարյացակամ հարաբերություններ ստեղծելուն և պահպանելուն [5]:
- «PR-ը հավաստի տեղեկատվության վրա հիմնված կառավարման ձև է, որի ընթացքում ներդաշնակություն է հաստատվում կազմակերպության շահերի և նրա սոցիալական միջավայրի միջև»:
- «PR-ը կառավարման գործընթաց է՝ ուղղված կազմակերպության և հասարակության հետ փոխշահավետ հարաբերություններ հաստատելուն, ինչից էլ մեծապես կախված է այդ կազմակերպության կենսագործունեությունը» [5]:
- «PR-ը անհատների, կազմակերպությունների, խմբերի կամ ամբողջ հասարակության մոտ նյութերի տարածման և պարզաբանման, տեղեկատվության փոխանակման միջոցովվերջիններումոտ ընդհանուր տրամադրություններն ու արձագանքը ճշտելու միջոցով փոխըմբռման և համակրանք ձևավորելու աջակցություն է» [6]:
- «PR լայն լսարանի և պոտենցիալ հաճախորդների վրա ներգործելու արվեստ է» [7]:
- «PR-ը կազմակերպության շահերի և նրա սոցիալական միջավայրի միջև ճիշտ տեղեկատվության հիման վրա ներդաշնակություն հաստատելու կառավարման գործընթաց է» [8]:
- «PR-ը որևէ երևույթի, որևէ անձի, կազմակերպության, կառավարման մարմնի կամ այլ կազմակերպության նկատմամբ նպաստավոր հարաբերություններ ստեղծելու վերաբերյալ տեղեկատվություն տարածելու քաղաքականության և գործունեության ոլորտ է» [9]:
- «PR-ը կառավարչի գործ է, որը գնահատում է հասարակության վերաբերմունքը, նույնականացնում է հասարակության հետաքրքրությունները անհատի կամ կազմակերպության գործողության և քաղաքականության հետ և իրացնում է հասարակության կողմից ընմբռման և ընկալման գործողությունների ծրագիրը» [10]:
- «PR-ը հաղորդակցական գործունեության ոլորտ է, որն ուղղված է հասարակության և կազմակերպության միջև բարյացակամ և ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը և պահպանմանը՝ նպատակաուղղված, գործառնական, հավաստի և բավարար տեղեկատության հիման վրա» [10]:

Մի շարք հեղինակներ հասարակության հետ կապը որոշարկելու համար օգտագործում են «գիտություն», «արվեստ» հասկացությունները: Իսկ որոշ հեղինակներ այն դիտարկում են որպես սոցիալ-կառավարման մեխանիզմ [11]:

Գործնականում բոլոր հեղինակները նշում են տվյալ գործունեության տեղեկատվական բնույթը, ընդգծելով, որ փոխըմբռման գործընթացը իրականացվում է տեղեկատվության փոխանակման և նրա հետ կապի կազմակերպման հիման վրա: Հեղինակներն ուշադրություն են դարձնում ճշգրիտ, հավաստի տեղեկատվության և դրա ամբողջականության վրա:

PR-ի վերաբերյալ մեկ այլ տեսակետ են հայտնում ռուս հետազոտողներ Ա.Ն. Չումիկովը և Մ.Պ. Բոչարովը: Այս հեղինակների կարծիքով՝հասարակության հետ կապը (PR) կառավարման հատուկ ձև է, որն աջակցում է կազմակերպության և հասարակության հետ վերջինիս փոխըմբռնման և համագործակցության հաստատմանը և պահպանմանը, տարաբնույթ խնդիրների լուծմանը, օգնում է կազմակերպության ղեկավարներին տեղեկացված լինելու հասարակության կարծիքի մասին և ժամանակին արձագանքելու [12]:

Վերջին հաշվով՝ PR-ի բոլոր սահմանումներում առկա են իմաստային տեսակետից համանման հատկանիշները, որոնք բնութագրում են PR-ի նպատակները, խնդիրները, արդյունքները:

Ընդհանրացնելով վերոշարադրյալ սահմանումները՝ հնարավոր ենք համարում առաջարկելու հետևյալ սահմանումը. «Հասարակության հետ կապը (PR) գիտություն է և արվեստ, հաղորդակցական գործունեություն, որը նպատակաուղղված տեղեկատվության հիման վրա սուբյեկտի (անհատի, կազմակերպության, ինստիտուտների, կուսակցության) և հասարակության միջև բարյացակամ և ներդաշնակ հարաբերություններ է ձևավորում և պահպանում»:

PR-ը նաև կառավարման ձև է, որն իրականացվում է քաղաքական իշխանության, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, կրթական և կրոնական կազմակերպությունների և այլնի կողմից՝ հասարակության հետ նպատակային և թիրախային կապը ներդաշնակեցնելու համար: Իրենց նպատակներին հասնելու համար հասարակության հետ կապ իրականացնողները (սուբյեկտները) ամուր հարաբերություններ են հաստատում և պահպանում տարաբնույթ լսարանների հետ՝ աշխատանքային կոլեկտիվների, տարբեր միավորումների անդամների, սպառողների, տեղական համայնքների, պետական տարբեր հաստատությունների պաշտոնյաների, քաղաքական կազմակերպությունների, քաղաքական գործիչների և այլն: Նպատակներին հասնելու համար կազմակերպության ղեկավարից պահանջվում է լայն գիտելիքներ սոցիալ-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Որոշ հեղինակներ հասարակության հետ կապը դիտարկում են որպես քարոզչության հոմանիշ: Քարոզչությունը հայացքներ, մտքեր և տեսություններ տարածելու միջոց է՝ նպատակ ունենալով զանգվածների մոտ ձևավորել որոշակի աշխարհայացքային պատկերացումներ, որոնք արտացոլում են քարոզչություն իրականացնողի շահերը և խթանում նրանց համապատասխանող գործունեությունը: Այսինքն՝ քարոզչությունը գործունեության ոլորտ է, որն ուղղված է զանգվածներին և աջակցում ու տարածում է գաղափարները հասարակության գիտակցությունում: Իսկ քաղաքական քարոզչության խնդիրն է ազդել անհատների, խմբերի, հասարակության գիտակցության վրա, հասնել քաղաքական գործունեության շրջանակում որոշակի՝ նախապես նպատակադրած արդյունքին: Քարոզչությունը քաղաքական գործիք է և սոցիալական վերահսկողության միջոց: Քարոզչությունը անսկզբունքային մանիպուլյացիայի գործիք է. այն հաշվի չի առնում բարոյական հայեցակետերը, իսկ համոզելու մեխանիզմը ուղղված է միայն անձնական շահին: Հասարակության հետ կապը (PR) ուղղված է փոխըմբռմանը՝ գաղափարների և կարծիքների ինքնակամ ընդունման, անշուշտ, բարոյական նորմերի պահպանման ճանապարհով:

1. *Конецкая В.П.* Социология коммуникаций. Учебник. “Международный университет бизнеса и управления”. М., 1997. СС. 240–241.
2. *Harlow Rex F.* Buuilding and Public Relations Definition // Public Relations Review. 1976, Winter. Vol. 2, № 4. p. 36.
3. *Королько В.Г.* Основы паблик пилейшнз. Рефл-бук, К.: «Ваклер». М., 2001. С. 27.
4. *Григорьева Н.* Работа учереждения с общественностью. СПб.: Изд-во ГУП, 1999. СС. 17–19.
5. *Тульчинский Г.* Public Relations: Репутация, влияние, связи с прессой и общественностью, спонсорство. СПб., 1997. С. 7.
6. *Блек С.* Паблик Рилейшнз. Что это такое? / Пер с англ. Новости. М., 1990. С. 10.
7. Паблик рилейшнз: Статьи // Экономика и жизнь, 1996. № 32. С. 23.
8. *Артемникова И.П.* Общество оценщиков PR // Экономика и жизнь, 1995 № 6. С. 6.
9. *Тульчинский Г.* Public Relations: Репутация, влияние, связи с прессой и общественностью, спонсорство. СПб., 1997. С. 21.
10. *Зайцев В., Уткин Е.* Сколько стоит добрая молва? // Россия молодая, 1993. № 6. С. 22.
11. *Григорьева Н.* Работа учереждения с общественностью. СПб., 1999. С. 22.
12. *Чумиков А.Н., Бочаров М.П.* Связи с общественностью: теория и практика: Учебное пособие. М.: Дело, 2003. С. 16.

ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПОЛИТИЧЕСКОГО PR-а

Резюме

В переходный период радикальные системные изменения должны соответствовать специфике народа, нации, страны, конкретно: историческим условиям, уровню развития, национальным интересам того или иного общества. Только в этом случае можно ожидать реального результата, избежать ложного кризиса, обеспечить относительно стабильное развитие общества и реализовать в данный исторический период соответствующую стратегию развития. В этом случае стратегия предстает как гарантия реализации политики правящей системы. А для этого необходимо работать с обществом, информируя его.

В течение времени работа с обществом приобретает новый качественный уровень и, отделяя рост развития, превращается в самостоятельную сферу. PR или «Связь с общественностью» (работа с обществом) возникла в 1903 году в США. Сегодня она как сфера науки практически пронизывает все сферы жизнедеятельности общественной жизни. Деятельность «работы с общественностью» получила новый импульс в период социалистических реформ и стала активнее во время взаимодействия и управления общечеловеческими социальными ценностями, а также с возникновением глобальных проблем – таких, как экология, мораль, религия, образование, культура и т.д.

Ключевые слова: политический PR, массы, общественное мнение.

THEORETICAL AND METHODOLOGICAL ANALYSIS OF POLITICAL PR

Summary

Structural radical changes at the transition phase should correspond to this or that nation's community, country's peculiarities, concrete historical conditions, the degree of development, nation's interests etc. Only then it is possible to see real results, avoid false crisis, provide constant development within society and carry out ideology corresponding to a given historical period. In this case the ideology stands for a guarantee to realize the policy of the ruling system. To realize that ideology one should work with the society, informing about it. At times activities carried within the society gain new quality degree and the development itself transforms into professional sphere for activities.The concept of PR or "Contact with society'' originated in 1903 in the USA. Nowadays it has already penetrated into the active sphere of social life.The activity called ''Work with the society'' gained its attention during the socialist reforms and became more and more active while managing and interacting within social systems of human social values and global issues, such as ecology, morality, religion, education, culture etc.

Keywords: Political PR, masses, public opinion.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ա. Դոբին

Տեխնոլոգիաների բուռն զարգացումը դրական ազդեցություն ունենալով տնտեսական աճի վրա, ցավոք ունի նաև իր հակադարձ կողմը, որով օբյեկտիվորեն ստեղծվում են նախադրյալներ ահաբեկչական վտանգի ուժեղացման համար:

Տեղեկատվական անվտանգության գործունեության ոլորտում առկա են հիմնախնդիրներ, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀԱՊԿ անդամ երկրների տարածաշրջանում: Դրանք են ՀԱՊԿ-ի անդամ երկրների օրենսդրական հիմնախնդիրները և օրենսդրական ակտերի պատշաճ ներդաշնակեցման բացակայությունը, միջպետական համագործակցության անկատարությունը, անձնակազմի պատրաստվածության և հատուկ ստորաբաժանումների ոչ բավարար հագեցվածության մակարդակը:

Տեղեկատվության պաշտպանության ապահովման տեխնոլոգիական հիմքի զարգացումը հանդիսանում է պետության գործունեության առաջնահերթ ուղղություններից և ազգային անվտանգության հիմնական բաղկացուցիչներից մեկը: Խնդիրները հնարավոր է լուծել կազմակերպչական, տեխնիկական, ծրագրային և հատուկ միջոցառումների համալիր իրականացման դեպքում:

Գլոբալացման գործընթացները և վեբ-տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հանգեցնում են տեղեկատվական ռեսուրսների բևեռացմանը բաց հեռահաղորդակցության համակարգերում: Ինտերնետի ազգային սեգմենտները իրենց վրա են վերցրել տեղեկատվական գործառույթները և դարձել են բազմաթիվ երկրների քարոզչական և հոգեբանական ներազդեցության ակտիվ միջոց:

Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի, տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդրի աճող արդիականությունը վկայում է հակազդեցության աշխատանքների մակարդակի բարձրացման նոր ձևերի որոնման և մշակման անհրաժեշտության մասին:

Տեխնոլոգիաների բուռն զարգացումը, դրական ազդեցություն ունենալով տնտեսական աճի վրա, ցավոք, ունի նաև իր հակադարձ կողմը՝ օբյեկտիվորեն ստեղծվում են նախադրյալներ ահաբեկչական վտանգի ուժեղացման համար: Հակառակորդը հաճախ պարզապես ոչ թե վիրտուալ է, այլև անհասանելի: Տեղեկատվական տարածքը նրանց կողմից օգտագործվում է սեփական գաղափարները և նպատակները քարոզելու համար: Ընդ որում տեղեկատվական հարձակումների կազմակերպիչները վստահ են իրենց անպատժելիության մեջ, որին ոչ պակաս նպաստում են տեղեկատվական անվտանգության գործունեության ոլորտում առկա հիմնախնդիրները: Որպես օրինակ կարելի է նշել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների տարածաշրջանում առկա հիմնախնդիրները: Դրանք են՝ ՀԱՊԿ-ի անդամ երկրների օրենսդրական հիմնախնդիրները և օրենսդրական ակտերի պատշաճ ներդաշնակեցման բացակայությունը, միջպետական համագործակցության անկատարությունը, ինչպես

նաև անձնակազմի պատրաստվածության և հատուկ ստորաբաժանումների ոչ բավարար հագեցվածության մակարդակը, ինչպես նաև մի շարք հիմնախնդիրներ:

Տեղեկատվության և տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների աճող ազդեցությունը երկրների անվտանգության ապահովման քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա պայմանավորում է տեղեկատվական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը ոչ միայն առանձին պետությունների մակարդակով, այլև տեղեկատվական ոլորտում ժամանակակից սպառնալիքներին համատեղ դիմակայելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտություն է առաջանում համատեղ համագործակցել տեղեկատվական տարածության և տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության, կործանիչ տեղեկատվական ազդեցության կանխարգելման գործում փոխադարձ օգնության տրամադրման ուղղություններով: Նման ծրագրի անհրաժեշտությունը դարձել է ժամանակի օբյեկտիվ պահանջ: Օրինակ՝ ՀԱՊԿ-ի անդամ երկրների կողմից վերջին տարիներին ձեռնարկվում են ինտենսիվ միջոցառումներ իրենց երկրներում տեղեկացվածության և կոմպյուտերիզացիայի մակարդակի բարձրացման ուղղությամբ, որի կապակցությամբ իրականացվել և դեռ շարունակում են իրականացվել խոշոր պետական նախագծեր տարբեր տեղեկատվական ցանցերի ստեղծման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրման, նախարարությունների, գերատեսչությունների և այլ պետական կառուցվածքների ավտոմատիզացման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների և համակարգերի կատարելագործման ուղղությամբ:

Պետական մարմինների գործունեության ակտիվ կոմպյուտերիզացիան հանգեցնում է նրան, որ գաղտնի տեղեկությունների զգալի մասը տեղափոխվում է տեղեկատվության էլեկտրոնային կրիչների վրա, որը ենթադրում է դրա էլեկտրոնային մշակում:

Մասնավոր առևտրային կառույցները ևս ինտենսիվ գործունեություն են ծավալում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման ուղղությամբ: Ստեղծվում են վճարումների և էլեկտրոնային առևտրի համակարգեր, իրականացվում է գլոբալ դիրքավորման համակարգերի ներդրումը և օգտագործումը: Ինտերնետում զարգանում է շարունակական տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման ենթակառուցվածքը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա, մեր կարծիքով, ՀՀ տեղեկատվական անվտանգության առավել արդիական սպառնալիքներն են.

- Ազգային օրենսդրությամբ արգելված տեղեկատվության կանխամտածված տարածումը, որին վերաբերվում են ահաբեկչության գաղափարները, կրոնական ծայրահեղականության և ֆունդամենտալիզմի կոչերը, պատերազմի քարոզչությունը, սահմանադրական կարգի բռնապետական տապալման կոչերը, զանգվածային անկարգություններն և այլ բռնի գործողությունները, զրպարտչական և ապակողմնորոշող տեղեկությունների տարածումը, որոնք բացասական ազդեցություն են գործում բնակչության հասարակական-քաղաքական գիտակցության և երկրում կամ տարածաշրջանում սոցիալ-տնտեսական վիճակի վրա, որոնք հակասում են կոնկրետ ազգի ազգային արժեքներին, հասարակական և բարոյական նորմերին, ավանդույթներին և սովորույթներին:
- Սահմանափակ տեղեկատվության ոչ բավարար պաշտպանվածությունը, որը հանգեցնում է դրա տարածմանը և բնութագրվում է տեղեկատվական համակարգերում, տվյալների բազաներում և բանկերում պաշտպանիչ միջոցառումների թույլ կազմակերպմամբ կամ լրիվ բացակայությամբ, համակարգչային տեխնիկայի կիրառմամբ փակ գործարարության վարման կանոնների անկատարությամբ, տեղեկատվության պաշտպանության կանոնների պահանջների չկատարմամբ կամ անտեսմամբ, սահմանափակ տեղեկությունների փոխանցման, պահպանման և մշակման համար չպաշտպանված հեռահաղորդակցության համակարգերի կիրառմամբ:
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտում առանձին անձանց, հանցավոր խմբավորումների և կազմակերպությունների ոչ օրինական գործունեությունը, ինչպիսին է տեղե-

կատվական համակարգերի և պետական մարմինների, սոցիալական, հասարակական և ֆինանսական կառույցների ռեսուրսների համակարգչային խակինգը, և, որպես հետեվանք, դրանց գործունեության ապակազմակերպումը և վնասները, վնասակար համակարգչային ծրագրերի ստեղծումը և տարածումը:

Այսօր տեղեկատվական հակազդեցությունը դարձել է աշխարհի շատ երկրների ճակատագիրը կանխորոշող կարևորագույն աշխարհաքաղաքական գործոն: Ինչպես արդեն նշվել է ԱՄՆ-ը ձգտում են հասնել գերիշխանության՝ շնորհիվ տեղեկատվական պատերազմի վարման մեթոդների և միջոցների ստեղծման, որը ինչպես աշխարհի ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի համար լուրջ վտանգ է ներկայացնում: Մինչ օրս այս գործոնը թերագնահատվել է և կարելի ասել, որ դեռ թերագնահատվում է հայկական քաղաքական էլիտայի կողմից: Մեր կարծիքով, հենց այս թերագնահատումն է հանդիսանում ժամանակակից Հայաստանի բազմաթիվ հիմնախնդիրների պատճառը:

Արտաքին քաղաքական քարոզչության խորհրդային համակարգը հզոր մեխանիզմ էր, որը ոչ միշտ է արդյունավետ օգտագործվել ԽՍՀՄ-ում տեղեկատվական-գաղափարախոսական ոլորտում ռազմավարական վերլուծաբանների բացակայության պատճառով:

Ներկայումս ամերիկացի մասնագետների կարծիքով, տեղեկատվական հակազդեցությունը իրենից ներկայացնում է ոչ միայն զինված ուժերի գործողությունների ապահովման ձև՝ զորքերի կառավարման և հսկողության, ռադիոէլեկտրոնային ճնշման, բարոյահոգեբանական գործընթացների խախտման միջոցով, այլև շատ հեռու է անցնում թվարկված հիմնախնդիրներից [1]: MR-661-OSD հաշվետվությունում (Strategic Information Warfare. A new face of War) տեղեկատվական զենքի հնարավորությունների գիտակցման արդյունքում առաջացել է նոր հասկացություն՝ ռազմավարական տեղեկատվական հակազդեցություն, որը հենց ներկայացվել է MR-964-OSD հաշվետվությունում, որտեղ այն դասակարգվել է առաջին և երկրորդ սերունդների ռազմավարական հակազդեցության [2]: Ընդ որում առաջին սերունդի ռազմավարական տեղեկատվական հակազդեցությունը դիտարկվում է հակազդեցության ավանդական միջոցների կողքին (միջուկային, քիմիական, կենսաբանական և այլն): Երկրորդ սերնդի ռազմավարական տեղեկատվական հակազդեցությունը դիտարկվում է որպես ռազմավարական հակազդեցության նոր ձև: Տեղեկատվական հակազդեցության վարման հիմնախնդիրների շուրջ տեսակետների որոշակի վերափոխման պայմաններում փոխվում են նաև խնդիրները, որոնք պետք է լուծվեն նպատակներին հասնելու համար: Այսպես, առաջին սերնդի տեղեկատվական հակազդեցության համար, դրանք են [3].

- պետական և ռազմական կառավարման ենթակառուցվածքի տարրերի կրակային կասեցում,
- ռադիոէլեկտրոնային պայքար (կապի ուղիներով և կողմնակի ճառագայթմամբ հետախուզական տեղեկատվության ստացում տեղեկատվական հոսքերը բռնելու և ապակողավորելու միջոցով),
- տեղեկատվական ռեսուրսների չարտոնագրված օգտագործում դրա հետագա աղավաղմամբ կամ գողացմամբ,
- հետաքրքրող տեղեկատվության ստացում տեղեկատվության բաց աղբյուրները բռնելու ճանապարհով:

Երկրորդ սերնդի տեղեկատվական հակազդեցությունը ենթադրում է մեկ այլ մոտեցում [3, 30–32].

- բարոյականության բացակայության միջավայրի ստեղծում, բացասական վերաբերմունք հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ,
- մանիպուլյացիա երկրի բնակչության սոցիալական խմբերի հասարակական գիտակցությամբ և քաղաքական կողմնորոշմամբ,

- կուսակցական շարժումների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացումը՝ կոնֆլիկտների սադրանքի, անվստահության, կասկածամտության հրահրման, քաղաքական պայքարի սրման նպատակով,
- իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական ապահովման մակարդակի իջեցումը, սխալ կառավարչական որոշումների ընդունման ներշնչումը,
- սոցիալական, քաղաքական, ազգային, կրոնական բախումների հրահրումը,
- կառավարման մարմինների կողմից կարևորագույն որոշումների ընդունման դժվարեցումը,
- պետության միջազգային ավտորիտետի, այլ երկրների հետ համագործակցության խզումը:

Այսպիսով, տեղեկատվական հակազդեցությունը կողմերի միջև պայքարի ձև է, որն իրենից ներկայացնում է հատուկ (քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական և այլ) մեթոդների, միջոցների օգտագործում հակազդող կողմի տեղեկատվական միջավայրի վրա ներազդեցության և դրված նպատակներին հասնելու համար: Նման տեղեկատվական հակազդեցության վերջնական նպատակն է տեղեկատվական գերիշխանության ձեռք բերումը և պահպանումը [4]:

Ներկայումս ՀՀ-ում տեղի է ունենում պետական իշխանության մարմինների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման գործընթաց: Տեղեկատվական-հեռահաղորդակցության համակարգերում և ցանցերում տեղեկատվական անվտանգության սպառնալիքների աճը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- տեղեկատվության մշակման գործընթացների ավտոմատացման մեթոդների, միջոցների և ձևերի զարգացումը ու բարդացումը,
- ժամանակակից համակարգիչների հաշվողական հզորությունների ավելացումը դրանց շահագործման պարզեցմանը զուգահեռ,
- համակարգիչների և ավտոմատացման այլ միջոցների շնորհիվ կուտակվող, պահպանվող և մշակվող տեղեկատվության ձևերի և ծավալների ավելացումը,
- ծրագրային միջոցների բուռն զարգացումը առանց տեղեկատվական ավտանգության պահանջների պահպանման,
- ժամանակակից աշխարհում Ինտերնետի աճող բուռն դերակատարությունը:

Վերոգրյալ փաստերը վկայում են, որ ժամանակակից պայմաններում տարբեր, այդ թվում նաև դրական պատճառներով, զարգացած երկրների հետախուզական ծառայությունների կողմից ջանքեր են գործադրվում տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցերի վրա տոտալ հսկողություն սահմանելու նպատակով: Ընդ որում այս դեպքում յուրաքանչյուր պետության կարող է հասցվել քաղաքական, տնտեսական, էկոլոգիական և ռազմական վնաս ժամանակի իրական մասշտաբում և առանց պատերազմ հայտարարելու և կիրառելով տեղեկատվական զենք:

Ուժային կառույցները, դրանց համակարգերը ավելի հաճախ բախվում են տեղեկատվական անվտանգության տարբեր սպառնալիքների հետ, ինչպիսիք են համակարգչային հանցագործությունները, վանդալիզմը և այլն: Վնասի նման աղբյուրները, ինչպիսիք են համակարգչային վիրուսները, կարող են բավականին ագրեսիվ լինել: Ընդ որում այդ սպառնալիքները կարող են իրագործվել ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս: Փորձը ցույց է տալիս, որ այսօր նման խնդիրների լուծումը հղի է որոշակի դժվարություններով, որը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից են.

- տեղական արդյունաբերության զգալի հետ մնալը էլեկտրոնային կոմպոնենտային բազայի ստեղծման ոլորտում, որը զգալիորեն կանխորոշում է ոչ միայն ռադիո-

էլեկտրոնային ապարատուրայի և համակարգերի տեխնիկական բնութագրիչները, այլև տեխնոլոգիական և տեղեկատվական անվտանգության մակարդակը:

Այս կապակցությամբ տեղեկատվական ոլորտում պետական անվտանգության ժամանակակից խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն կուտակված փորձի ընդհանրացումը և կիրառումը, այլև տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումների ընդհանրացումը և օգտագործումը: Այսպես, ինչպես հայտնի է Intel պրոցեսորների ունիկալ իդենտիֆիկացիոն համարը, որը հայտարարագրվել է որպես ոչ օրինական կրկնօրինակումից պաշտպանելու միջոց, կարող էր օգտագործվել հսկելու կոնկրետ համակարգչի վրա շրջանառվող տեղեկատվությունը [5]: Այս խնդրի լուծման համար պետք է նվազագույնի հասցնել տեխնոլոգիական խզումը ինչպես սեփական տեխնոլոգիական բազայի ստեղծման, այնպես էլ միկրոէլեկտրոնիկայի հեռանկարային ապրանքների մշակման և արտադրության ոլորտում միջազգային համագործակցության շնորհիվ:

Երկրորդ պատճառը այն է, որ տեղական սարքավորումների մշակման և արտադրության ոլորտում նոր սերնդի կապի ցանցերի հայեցակարգի վրա (NGN-Next Generation Networks) [6] բազմասերվիսային ցանցերի ստեղծումն է: Սրա նպատակն է կազմակերպչա-տեխնիկական, տեխնոլոգիական և նորմատիվ-իրավական նախադրյալների ստեղծում կապի նեղ մասնագիտացած ցանցերի՝ միասնական մուլտիսերվիսային ցանցում միավորման նպատակով: Այսօր առավել արդիական է կոդավորման ժամանակակից միջոցների մշակման և ներդրման հարցը:

Երրորդ պատճառը այն է, որ պատմական ձևավորված հանգամանքների բերումով բազմաթիվ համակարգեր կառուցվել են ներմուծված սարքավորումների հիման վրա: Իհարկե, դա մի կողմից թույլ է տվել բարձրացնել օգտագործողների սպասարկման որակը և ընդլայնել մատուցվող ծառայությունները, մյուս կողմից դարձել է օտարերկրյա արտադրող ընկերությունների տեխնիկական քաղաքականությունից կախվածության պատճառ:

Նանոխտեխնոլոգիաների ներկայիս դարաշրջանում ստեղծել տեղեկատվական պատերազմի վարման արդյունավետ մեթոդներ և միջոցներ ավելի հեշտ է և էժան, քան դրանց դեմ պայքարի միջոցների ստեղծումը: Նոր ոչ թանկ ու փոքր սարքերը հեշտությամբ տեղավորվում են արդյունաբերական և զրասենյակային սարքավորումների դետալներում: Այսօր ներմուծված սարքավորումներում հայտնաբերվել են բազմաթիվ այդպիսի դետալներ: Այսպես, Իրանի կողմից գնված հատուկ համակարգերում դրված էին «տրամաբանական ռռնակներ», և Պարսից ծոցի գոտում պատերազմի դեպքում այդ համակարգերը սկսելու էին աշխատել [7]:

Նման դետալներ տեղադրված էին նաև Crypto AG շվեցարական ընկերության կրիպտոգրաֆիական միջոցներում, որոնք նվազեցնում էր կրիպտոգրաֆիական միջոցների դիմակայությունը: Այստեղ իրենց դերակատարությունն են ունեցել ԱՄՆ փորձագետները [8]: Իսկ ինչու չթվենք նաև բջջային կապի ժամանակակից միջոցները: iPhone և Blackberry հեռախոսների ծրագրերը ապահովում են օգտագործողի տեղեկատվության փոխանցում տեղեկատվության մշակման հատուկ կենտրոններ Մեծ Բրիտանիայում և Կանադայում, ինչը, գերմանացի փորձագետների կարծիքով, այն հասանելի է դարձնում ԱՄՆ հատուկ ծառայությունների համար: Այդ իսկ պատճառով գերմանացի պետական ծառայողները պետք է օգտվեն միայն հայրենական արտադրության բջջային հեռախոսներից [9]:

Տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների բուռն զարգացումը տեղեկատվության թվային մշակման մեթոդների լայն կիրառման հիման վրա զարգացած երկրների հետախուզական ծառայությունների առջև որպես առաջնահերթ հարց դնում է հսկողության սահմանման անհրաժեշտությունը ոչ միայն տեխնիկական միջոցների, այլև ծրագրային ապահովման վրա: Վերոգրյալի ապացույցը այն է, որ ԱՄՆ բացահայտ հայտարարել են, որ ԱԲՆ հատուկ ծառայությունը սերտորեն համագործակցում է գլխավոր

ծրագրային կազմակերպության հետ: Այստեղ խոսքը գնում է Microsoft-ի ԱՄՆ ԱՆԲ-ի հետ Windows Wista օպերացիոն համակարգի վրա համատեղ աշխատանքի մասին:

Չորրորդ պատճառը տեղեկատվության պաշտպանության ոլորտում բարձր որակավորում ունեցող կադրերի բացակայության խնդիրն է: Շատ դեպքերում ցանցի, կապի վրա հարձակումների հաջողության պատճառը ոչ թե տեխնոլոգիական խոցելիությունն է կամ սխալները, այլև անվտանգության քաղաքականության տրիվիալ խախտումը կամ տեղեկատվական անվտանգության համակարգերի վարչարարությունը: Հենց այս երկրորդ պատճառի հետևանքով սպասարկող անձնակազմի և մասնագետների ուսուցումը հղի է մի շարք դժվարություններով, որոնք կապված են լրիվ տեխնիկական փաստաթղթերի բացակայությամբ, մասնագիտացած ուսումնական կենտրոններում ուսուցման կուրսերի սահմանափակությամբ և դրանց բարձր արժեքով, իրավական սահմանափակումներով, որոնք կապված են տեղեկությունների չտարածման հայտարարագրի հետ:

Հինգերորդ պատճառը հայրենական SS հասարակության անպատրաստ լինելն է արագ անցում կատարելու տեղեկատվական-հեռահաղորդակցության մեխանիզմների գնահատման մեթոդների և չափանիշների օգտագործմանը, որոնք սահմանվում են միջազգային և ազգային ստանդարտներով:

Այսպիսով, տեղեկատվության պաշտպանության ապահովման տեխնոլոգիական հիմքի զարգացումը հանդիսանում է պետության գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը և ազգային անվտանգության հիմնական բաղկացուցիչներից մեկը: Այս խնդիրը հնարավոր է լուծել կազմակերպչական, տեխնիկական, իրավական, կրիպտոգրաֆիական, ծրագրային-մաթեմատիկական և հատուկ միջոցառումների համալիրի իրականացման դեպքում համապատասխան նախարարությունների, SS հասարակության ջանքերի միավորման շնորհիվ պետության կոնսոլիդացնող դերի պայմաններում:

1. *Большаков А.А., Петряев А.Б., Платонов В.В., Ухлинов Л.М.* Основы обеспечения безопасности данных в компьютерных системах и сетях. Часть 1. Методы, средства и механизмы защиты данных. СПб.: Конфидент, 1996. С. 48.
2. Защита государственных и промышленных секретов. Методы обнаружения вторжений в вычислительные системы // Ин. печать об экономическом, научно-техническом и военном потенциале государств-участников СНГ и технических средств разведывательных служб капиталистических государств / ВИНИТИ, 1993. № 7. СС. 8–15.
3. *Кучер В.А., Бардаев Э.А.* Безопасность информационных технологий, 1997, №1. С. 29.
4. *Данилов Д.* США хотят удержать Кавказ от России. Д. Данилов. Информационно-аналитический журнал ЦАТУ «Ассиметрические угрозы и конфликты низкой интенсивности», 2008, № 3. СС. 9–11.
5. *Гриняев С.* Информационное превосходство вместо «ядерной дубинки». Армейский сборник, 2002, № 5. СС. 40–42.
6. *Королев А.В.* Проблемы внедрения NGN-технологий в сети связи специального назначения. А.В. Королев, А.Е. Миронов, И.А. Саитов. Вестник Совета ГК ВОСП при РАСУ, ноябрь 2006г. СС. 28–31.
7. *Онорский Б.* Информационная война-основная форма борьбы ближайщего будущего. Обозреватель, 1998, № 5. С. 59.
8. *Гусаров А.* Защита информации в сетях связи. Военная наука и техника, 2007, № 2.
9. http://zl.uka.ru/2010/08/12 -iphone/

ИНФОРМАЦИОННАЯ БОРЬБА КАК НОВАЯ УГРОЗА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАНОСТИ

Резюме

Развитие технологической основы обеспечения информационной безопасности является важнейшим направлением деятельности государства, а также одним из основных компонентов национальной безопасности. Бурное развитие информационных технологий, имея положительное влияние на экономический рост, к сожалению, имеет и обратную сторону – объективно создаются предпосылки к повышению уровня террористической угрозы. Существуют значительные проблемы по обеспечению информационной безопасности как во всем мире, так и в регионе стран-участниц Организации Договора о Коллективной Безопасности. Это и пробелы в законодательствах государств-членов ОДКБ, и отсутствие должной гармонизации законодательных актов, и несовершенство межгосударственного сотрудничества и взаимодействия, и недостаточный уровень подготовленности персонала и оснащенности специальных подразделений. Проблемы возможно решить при помоши комплексного осуществления организаторских, технических, программных и специальных мероприятий.

INFORMATION WARFARE AS A NEW THREAT TO NATIONAL SECURITY

Summary

The development of technological base of the provision of information defense is one of the primary directions of the state activity and one of the main components of the national security. Rapid growth of technologies has its positive influence on economic growth, but unfortunately it has its negative influence as well, by which objective preconditions are created for increasing danger of terrorism. There are core issues in the area of Information Security Activity. In the whole world as well as in the area of The Collective Security Treaty Organization (CSTO) countries the core issues are the lack of harmonizing of legal core issues and legal acts in CSTO member countries, interstate cooperation of being not perfect and unsatisfactory level of readiness of the staff and the special sub-divisions. The problems can be solved through complex implementation of organizational, technical and programming special measures.

PROBLEMATIC ASPECTS OF IHL-IHRL CORRELATION AND THE EXTENT OF IHRL APPLICABILITY TO THE RIGHT TO LIFE DURING ARMED CONFLICTS

L.A. Yeremyan

IHL-IHRL parallel applicability during armed conflicts has recently been largely debated. Referring to the lex specialis doctrine, often used to explain the nature of IHL-IHRL correlation, is in fact problematic. The extent of IHRL application during armed conflicts, especially non-international ones, also with regard to the right to life, should be identified on case-by-case basis.

Concurrent applicability of International Humanitarian Law ('IHL') and International Human Rights Law ('IHRL') has become an issue of severe debates during the last few decades, gaining more significance on theoretical and practical levels especially after the tragic events of 9/11. The nature of their correlation has been explained by referring to the lex specialis doctrine. However, it is argued in this article that application of that doctrine can be indeed problematic.

The article tends to analyze the problems of application of the *lex specialis* doctrine to IHL and IHRL correlation, and the reasons for such problems, as well as to answer the question as to what extent IHRL can be applied during armed conflicts with regard to, specifically, the right to life.

Differences between IHL and IHRL

The two branches of Public International Law ('PIL'): namely IHL and IHRL were for a long time disassociated in theory and often absolutely separated in practice.

The process of historical development of IHL was different from that of IHRL. IHL and IHRL became distinct branches of PIL in different times.[1] As to the written law, the development of IHL dates back to 1864 when the First Geneva Convention was adopted. While the development of written IHRL was the result of the Second

[1] Nancie Prud'homme, 'Lex Specialis: Oversimplifying a More Complex and Multifaceted Relationship?' (2007) 40 ISR. L. REV. 356, 360.

World War and it was expressed in the 1948 Universal Declaration of Human Rights ('UDHR')[2]. The historical development of IHL and IHRL, however, took place in opposite directions. IHL was initially designed to regulate inter-state relations concerning international armed conflicts ('IAC')[3]. Nature of armed conflicts has changed with the time, and nowadays majority of conflicts has become intrastate or mixed armed conflicts[4], affecting IHL provisions and resulting in regulations of internal affairs through development of new norms and relevant interpretation of existing provisions[5]. Common Article 3 ('Article 3') of the 1949 Geneva Conventions ('GC') stipulated provisions applicable also in non-international armed conflicts ('NIAC'). Further detailed regulations for NIAC were envisaged in Additional Protocol II ('AP II')[6]. Currently it is generally accepted that many rules of customary international law applicable to IAC are also applicable to NIAC[7]. By contrast, despite that IHRL treaties may also be applicable extraterritorially under certain circumstances[8], unlike written IHL, the primary aim of IHRL treaties was regulation of behavior within the territory of states[9].

IHL-IHRL significant correlation was rejected also at institutional level. The United Nations ('UN') bodies were reluctant to accept IHL – IHRL interplay, fearing that it would negatively affect the *jus ad bellum* approach undertaken in the UN Charter. At the same time, International Movement of the Red Cross and Red Crescent ('ICRC') did not want to relate its activities with those of the UN because the political nature of the UN could challenge the role and fundamental principles[10] of ICRC. Thus ICRC tended to separate the two branches of PIL too.[11] Institutional framework existing on the international level for IHL and IHRL is also completely different[12]. Theoretical and practical nature of IHL and IHRL is different as well. The theoretical basis for IHRL is the 'state vis-à-vis individual' approach[13], while IHL regulates relations between the parties to the conflict. IHL and IHRL are binding on different parties. Depending on qualification of conflict as either IAC or NIAC, IHL is binding on either

[2] Jean Pictet, *Development and Principles of International Humanitarian Law* (Martinus Nijhoff Publishers 1985) 3.
[3] Cordula Droege, 'Elective Affinities? Human Rights and Humanitarian Law' (2008) 90 International Review of the Red Cross 501, 503.
[4] Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck, *Customary International Humanitarian Law,* Volume 1: Rules (CUP 2005) xxxv
[5] Theodor Meron, 'The Humanization of Humanitarian Law' (2000) 94 The American Journal of International Law 239, 243–44.
[6] Protocol Additional to the Geneva Convention of 12 August 1949, and relating to the Protection of Victims of Non-International Armed Conflicts, 8 June 1977.
[7] Henckaerts and Doswald-Beck, *supra n. 4.*
[8] Noam Lubell, 'Challenges in Applying Human Rights Law to Armed Conflict' (2005) 87 International Review of the Red Cross 737, 741.
[9] Noam Lubell, *Extraterritorial Use of Force Against Non-State Actors* (Oxford Scholarship Online 2010) 202.
[10] Statutes of the ICRC, Geneva (1986, amended in 1991 and 2006), Preamble.
[11] Nancie Prud'homme, *supra n.1,* 359.
[12] IHL is in lack of institutional framework analogical to IHRL institutions which deal with human rights issues (for example, UN Human Rights Committee on international level, European Court of Human Rights ('ECtHR'), Inter-American Court of Human Rights, etc. on regional level).
[13] Cordula Droege, *supra n.3,* 503.

states or on states and non-state actors respectively.[14] The IHRL treaty language suggests that IHRL provisions are generally binding on state-parties to relevant treaties[15]. At the same time the motivation for IHRL development has been the protection of human rights, while initially the motivation for IHL development was the principle of humanity based on the idea of reciprocity[16]. The temporal scope of application of IHL and IHRL is different too. IHL is the law, which is applicable in times of armed conflicts[17]. By contrast the analysis of, for example, International Covenant on Civil and Political Rights ('ICCPR') text shows that IHRL is applicable in all times, save for cases of derogations made by state parties[18]. Incidentally, the International Covenant on Social, Economic and Cultural Rights ('ICSECR'), unlike ICCPR article 4, does not contain a special provision on possible derogations, which could suggest that all provisions of ICSECR should be applicable at all times without exceptions[19]. IHRL provisions are generally considered as derogable (with few exceptions, which are usually incorporated in the treaties[20]), opposed to generally non-derogable IHL[21]. Even the IHL and IHRL professional languages seem to be different to such extent that 'at times make it seem like speaking Dutch to the Chinese or vice versa'[22]. Differences in terminology of IHL and IHRL reflect the conceptual differences which become the reason for different logic and approaches within the framework of these two branches of PIL[23].

